Արձանագրություն N3

Սևանի ԲԿ ՓԲԸ- կարիքների համար հայտարարված << ՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ18/17 >> ծածկագրով բժշկական գործիքների ձեռք բերման մրցույթի ամփոփման նիստի

ք. Սևան

23 նոյեմբեր 2018թ.
ժամը՝ $16^{00}$

*Մասնակցում էին՝*

Հանձնաժողովի նախագահ՝ Հրաչյա Խալաֆյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Սարգիս Պողոսյան

Միրանուշ Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վարդուհի Սարգսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

1. Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

2.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին

3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում ՝ կողմ 3, դեմ՝0

2.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին.

Ընդունել ի գիտություն, որ ՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ18/17 ծածկագրով մրցույթ հարցման պատասխանը Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից դեռևս չի ներկայացվել, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2017թ N534-Ն որոշմամբ հաստատված

<<Էլեկտրոնային աճուրդի իրականացման >> կարգի (այսուհետ Կարգ) 20-րդ կետի Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ18/17 ծածկագրով մրցույթի հարցման միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել սույն ընթացակարգին՝ իրենց որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերի II մասի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայցված փաստաթղթերի ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից , հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին՝ իրենց որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Մասնակիցների ներկայացրած գները հետևյալն են՝

| N | Գնման առարկան | Չափի միավոր | քանակ | Արժեք | ԱԱՀ | Պայմանագրի գին | Մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ուրոլոգիական հետազոտությունների սարքեր | Հատ | 1 | 3910500 | 0% | 3910500 | Դիասերվ ՍՊԸ |

Մասնակիցներին ընտրելու համար կիրառված չափանիշ՝ հայտեր ներկայացրած և բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից։

Ուստի հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել.

| Հ/Հ | Մասնակիցը | Զափաբաժինը |
|---|---|---|
| *առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝* | | |
| 1 | Դիասերվ ՍՊԸ | 1 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0***

## 3.Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի համաձայն պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և գնահատող հանձնաժողովի արձանագրությունը ուղարկել սույն ընթացակարգի մասնակիցներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում, , քանի որ հայտ է ներկայացրել միայն եկ մասնակից , որի հետ կնքվում է պայմանագիր :

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0***

## 4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

*ՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ18/17* ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող օրը, ժամը 14:30 Սևանի ԲԿ ՓԲԸ-ի գնումների բաժնում՝ ք. Սևան , Նաիրյան169,1-ին հարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հրայր Խալաֆյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Սարգիս Պողոսյան |
| | Միրանուշ Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Վարդուհի Սարգսյան |